



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

28 նոյեմբերի 2012թ.

N 400-Վ

**ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 22-ի N 2204-Ա  
հրամանում լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հավելված 2-ի 8-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 22-ի «Էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման համակարգում հաշվետվությունների ձևաչափերը հաստատելու մասին» թիվ 2204-Ա հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ ենթակետով.

«8) «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի ձև» ձևաչափը՝ համաձայն N9 հավելվածի:»

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 22-ի «Էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման համակարգում հաշվետվությունների ձևաչափերը հաստատելու մասին» թիվ 2204-Ա հրամանը լրացնել նոր՝ N9 հավելվածով, համաձայն Հավելվածի:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Մ. Փաշայանին՝ ապահովել սույն հրամանի ամբողջական տեղադրումը ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ



*Handwritten signature*

Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆ